

1 (291)  
15.01.2012թ.  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապարտություն եւ գիրարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԲԱՐԻ ԵՐԹ, 2012

Նոր տարվա հրաշքն ամենուր է՝ այն բնության մեջ է, մեր սրտերում, ու առավել ևս, մեզ շրջապատող ամեն ինչում, որ ժպտում մանկական աչքերում, որոնք այս օրերին սովորականից ավելի վառ են փայլում... Դե իհարկե, չէ՞ որ Նոր տարին, նախ և առաջ, փոքրիկների տոնն է՝ լի անակնկալներով, խորհրդավորությամբ և ուրախ տրամադրությամբ... Իսկ ահա Ստեփանակերտի թիվ 3 մանկապարտեզի սաների համար օրերս կազմակերպված ամանորյա հեքիաթ-ներկայացումն իրոք հրաշալի առիթ էր՝ մեկ անգամ ևս տեղափոխվելու հեքիաթների հրաշալի աշխարհը, որտեղ ամեն ինչ պարզ ու անմեղ, է բարի ու լուսավոր: Ամենակարգում պետք է նշել, որ «Նոր տարին անտառում» բեմադրության մեջ ընդգրկված էին հենց մանկապարտեզի սաները, որոնք մարմնավորում էին անտառային կենդանիներին: Մանկապարտեզի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Ի. Գրիգորյանի անմիջական ղեկավարությամբ, ինչպես նաև մանկապարտեզի գեղարվեստական ղեկավար Ի. Փիրուսյանի ու դաստիարակչուհիներ Ծ. Առստանյանի և Լ. Առստանյանի ջանքերի շնորհիվ երեխաներն, իրոք, փայլուն հեքիաթ բեմադրեցին: Տեսնել էր պետք, թե ինչ եռանդով, ոգևորվածությամբ ու հուզմունքով էին փոքրիկները կատարում իրենց դերը... Հեքիաթն իր ողջ փայլով զարդարեց Ձմեռ պապը, որին փոքրիկները դիմավորեցին մեծ ցնծությամբ, իսկ ստացված նվերները կրկնապատկեցին երեխաների առանց այն էլ տոնական տրամադրությունը... Հեքիաթը, որն այդքան իրական էր, ավարտվեց՝ փոքրիկների սրտերում թողնելով ջերմ ու բարի



զգացողություններ: Իսկ մեզ մնում է աշխարհի բոլոր մանուկներին մաղթել անհոգ ու լուսավոր մանկություն: Եղեք առողջ ու միշտ ժպտացեք սիրելի փոքրիկներ: Բարի երթ, 2012 թվական:

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԶՆԱԿԱՐԳՆԵՐԻ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի փետրվարի 1-ից սկսում է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպչական կազմակերպչական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) առարկաներից միասնական (2012 թվականի բուհերի ընդունելության), պետական ավարտական և ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը: Միասնական քննություններին մասնակցելու համար շրջանավարտ (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ: 2011-2012 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտ լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցե՝ ք. Ստեփանակերտ, Թումանյան 63): Միասնական քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Արցախյան» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաձևով գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008415600 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին:
- Միասնական քննության վճարից (1500 դրամ) ազատվում են հետևյալ դիմորդները՝
- 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդան երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները: 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտներն ավարտական և պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում: Հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ էքստեռն կարգով ստանալու համար այդ իրավունքն ունեցող ցանկացողները, համապատասխան քննություններին հայտագրվում են Ստեփանակերտ քաղաքի հ. 8 ավագ դպրոցում (հասցե՝ Գ. Լուսավորիչ 20):

Դիմում-հայտերի ընդունման, պետական ավարտական և ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը 2012 թվականի մարտի 1-ն է: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել 97-40-51 հեռախոսահամարով: «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

## ՆՈՐԻՑ՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ



**Երկու տարի առաջ հանրապետության հանրակրթական դպրոցներում ներդրվեց գնահատման նոր համակարգ:** Տեսչական ստուգումներից պարզվել է, սակայն, որ այն լիարժեքորեն չի իրականացվում դպրոցներում: Այդ պատճառով ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սլավա ԱՄՐՅԱՆԸ «Լուսարարի» միջոցով նորից պարզաբանումներ է տալիս հարցի առնչությամբ:

- Պարոն Ասրյան, ո՞րն է գնահատման նոր համակարգի գաղափարաբանությունը:  
- Հանրակրթության բարեփոխումների առաջնությունը հարցերից մեկը գնահատման նոր համակարգի ներդրումն է. 5-միավորանոց գնահատման համակարգից անցում կատարվեց 10-միավորանոց համակարգին: Սա, իհարկե, մեխանիկական կողմն է: Իսկ բովանդակային առումով սովորողների ընթացիկ գնահատման նկատմամբ ներկայացվում են միանգամայն նոր պահանջներ: Այս հարցը և՛ մանրամասն քննարկվել է անցած

տարվա օգոստոսյան խորհրդակցությունների ժամանակ, և՛ մեթոդական ցուցումները տպագրվել են «Լուսարարում» ու ՀՀ ԿԳՆ «Տեղեկագրում» ու ներկայացվել հանրակրթական դպրոցներին՝ ի ղեկավարում: Այդ ցուցումներով պետք է կողմնորոշվեին և կատարեին մեթոդական պահանջները: Խոսքը հիմնականում վերաբերում է ընթացիկ գնահատումներին: Դրանք բաղկացած են երկու ձևից՝ միավորային գնահատում և ուսուցողական գնահատում: Միավորային գնահատումն իրականացվում է հետևյալ տեսակներով՝ բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ աշխատանք, կիսամյակային ամփոփիչ աշխատանք, ինչպես նաև կարճ ժամանակի համար նախատեսվող հարցարանը (թեստը)՝ որպես թեմատիկ աշխատանք և տնային աշխատանքը՝ որպես բանավոր հարցման ոչ պարտադիր տեսակ: Ըստ ուսումնական առարկաների, միավորային գնահատումն իրականացվում է հետևյալ ձևով. բոլոր առարկաներից մեկ կիսամյակում բանավոր հարցման քանակը պետք է լինի առնվազն չաբաթական ժամաքանակին հավասար՝ բացառությամբ լեզուների, որոնց քանակը պետք է լինի առնվազն չաբաթական ժամաքանակի կրկնակին: 2-4-րդ դասարանների մայրենի առարկայից բանավոր հարցման քանակը կիսամյակում պետք է լինի առնվազն ութ անգամ, ֆիզկուլտուրա առարկայից՝ բոլոր դասարաններում առնվազն երկու անգամ: Սրանք սահմանված նվազագույն չափաքանակներն են և ուսուցչի հայեցողությամբ կարող են նաև ավել հարցումներ նախատեսվել: Եվ տեսչության կողմից, և՛ տարբեր հարցադրումներից պարզ դարձավ, որ հատկապես բանավոր հարցումներ-

րի մասով եղել են որոշ շեղումներ: Այդ իսկ առումով նախարարությունում քննարկվել է այդ հարցը. վեր ենք լուծել բոլոր փաստաթղթերը, ձեռնարկները, մեթոդական ցուցումները և այլն: Եվ որպեսզի հատկապես տարրական դասարանի դասվարները մայրենի առարկայից պահանջվող բանավոր հարցումները կարողանան ճիշտ կատարել, ներկայացնենք մի քանի նկատառումներ:  
- Ո՞րն է այս գնահատման բովանդակային առավելությունը:  
- Որ աշակերտը ստանում է միավորային գնահատական՝ իր ցուցաբերած գիտելիքներին ու կարողություններին, հմտություններին համապատասխան:  
Եվ որքան հարցումն օպտիմալ է (ոչ թե դասի ինչ-որ դրվագի կամ հանձնարարված թեմայի ինչ-որ մի քայլի, այլ թեմաների ընդհանուր շարքի ուսումնասիրումից անմիջապես հետո կատարված ամփոփիչ գնահատման արդյունքներով), աշակերտի գիտելիքներն ստուգվում են լիարժեք: Բանավոր գնահատականը հիմնականում պետք է ապահովվի այս մասով: Կիսամյակային գնահատականը ձևավորվում է թե՛ բանավոր հարցման, թե՛ գործնական աշխատանքի և թե՛ թեմատիկ գրավոր աշխատանքների, կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականների հիման վրա: Եվ որքան բանավոր հարցման գնահատականը ռեալ է, այնքան աշակերտի ընդհանուր գնահատականը կնշանակվի իր կարողություններին, հմտություններին ու գիտելիքներին համապատասխան:  
- Ավելի հանգամանակից, խնդրեմ, բանավոր հարցման մասին:  
- Մեր նպատակն էլ հենց դա է: Պարզվում է, որ շատ ուսուցիչներ բանավոր հարցումը կատարում են

նախկին ձևով. թեման ուսուցանելուց հետո հաջորդ դասին հարցում են կատարում 2-3 աշակերտի, որոնք պատմում են նույն թեման: Սակայն հարցման այս ձևն իրեն չի արդարացնում: Եվ այստեղ գուցա հենց ներկայացվում է ուսուցանող գնահատման գաղափարը: Այս տարի այն դեռ չի ներդրվել, հավանաբար, հաջորդ ուսումնականից կլինի, բայց մեթոդական ցուցումներում ասվում է, որ պետք է նախապատրաստվել ուսուցողական գնահատման ձևը ևս երդրել դպրոցում:  
- Ի՞նչ է դա նշանակում:  
- Նյութի յուրացման աստիճանը որոշելու համար ուսուցիչը կարող է տվյալ թեմայի հաջորդ դասին հարցումներ կատարել. դա կարող է լինել կարճատև հարցաշարերի, բանավոր հարցման, անգիր արտասանության կամ ֆրոնտալ հարցումների միջոցով: Եվ այստեղ ուսուցիչը խրախուսական՝ բառային գնահատում է իրականացնում. «Լավ ես յուրացրել», «Վատ ես յուրացրել», «Չես խորացրել» և այլն: Նման գնահատումն այս ձևով պետք է ընթանա: Ուսուցիչն ինքը պետք է ընտրի, թե թեմաների որ շարքի համար բանավոր հարցում կատարի՝ ապահովելով այն նվազագույն քանակները, որ գնահատման չափորոշիչներով նախատեսված են: Գնահատման այս մեթոդաբանությունը հիմնված է նաև կրթության պետական չափորոշիչի վրա: Այսինքն՝ սա չափորոշչային պահանջ է, որ պետք է աշակերտների գիտելիքներն ստուգվեն, քանզի դա հնարավորություն է տալիս ուսուցչին փաստելու, թե ինչ է յուրացրել աշակերտը, ինչ կարողություններ ունի, որպեսզի հետագա գործունեության ընթացքում հենվի ոչ միայն աշակերտների ձեռքբերումների վրա, այլև պարզի

ՕՐԱԳԻՐ

ՆՈՐԻՑ՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1 Թերություններն ու դժվարությունները՝ դրանց վերացման ուղղությամբ նրանց հետ անհատական աշխատանք կազմակերպելու նպատակով:

- Անդրադառնա՞նք 2-4-րդ դասարանների մայրենիի բանավոր հարցումներին:

- Ասեմ, որ մենք տարրական դասարանների համար դպրոցներին ենք տրամադրել մայրենիի բանավոր հարցման, թեմատիկ գրավոր աշխատանքների և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների մեթոդական ձեռնարկներ: Ուսումնասիրել և պարզել ենք, որ դրանք հիմնականում համապատասխանում են գնահատման նոր կարգին: Ուսուցիչներին խորհուրդ կտայի խորապես ուսումնասիրել այդ ձեռնարկները: դրանց նախաբանում նույնպես ներկայացված է, թե որ աշխատանքն ինչպես պետք է կազմակերպել: Ասեմ նաև, որ բոլոր մեթոդական ձեռնարկներն ուղեցույց են ուսուցչի համար, և պետք է ուսումնասիրել ու ընտրել այն, ինչ ինքը գտնում է իրեն հարազատ: Այստեղ ուսուցիչը կարող է նաև յուրովի մոտեցում ցուցաբերել: Բայց քանի որ այս առարկայի գծով այժմ մեր ձեռքի տակ ունենք միայն այս ձեռնարկները, առաջարկում ենք առաջնորդվել հենց դրանցով: Այստեղ մայրենիի գնահատման համար յուրաքանչյուր կիսամյակում առաջարկվում է ութ բանավոր հարցում, որից չորսը՝ թեմատիկ, երկուսը՝ համընդհանուր, ֆորմտալ, երկուսը՝ համալիր: Պարզ է, որ դասագրքային թեմաների բանավոր հարցումն անմիջապես դասագրքի թեմաներից է. ուսուցիչը կարող է բանավոր հարցում կատարել թեմաների ամբողջ շարքն ավարտելուց հետո կամ բաժանել մասերի և ըստ դրանց՝ համապատասխան թեմաներից հետո կազմակերպել հարցումը: Նաև մի այսպիսի սխալ մոտեցում է ցուցաբերվել՝ որ յուրաքանչյուր հարցում

պետք է անպայման միևնույն ժամին կատարել և այդ ժամին էլ գնահատել բոլոր աշակերտներին: Այստեղ բանավոր հարցման ժամանակ ուսուցիչն օգտվում է ինտերակտիվ մեթոդից, այսինքն՝ խմբային աշխատանք է կազմակերպում և յուրաքանչյուր խմբի անդամակալով մասնակիցներին գնահատում է: Եվ այսպես, կարող է տվյալ ամփոփիչ գնահատման ընթացքում ոչ թե ամբողջ դասարանին, այլ մի քանի երեխաների գնահատել: Հասկանալի է՝ ինչքան երեխաների թիվը քիչ է, հնարավոր է ամբողջ դասարանն ընդգրկել: Եվ բացի այդ, բանավոր հարցման լրացուցիչ կարճ ժամանակի համար նախատեսված են հարցարաններ: Ասեմ, ուսուցիչը կարող է թեստային ձևով որոշ թեմաների յուրացումը բանավոր հարցման ձևով ընդգրկել ու գնահատել: Այսինքն՝ եթե գտնում է, որ այս ութ հարցումների՝ գումարած չորս թեմատիկ գրավոր աշխատանքների քանակ, գումարած՝ մեկ գործնական աշխատանք, կիսամյակային գրավոր աշխատանք, գնահատականները քիչ են, խնդրեն, կարող է նաև միջանկյալ հարցումներ կազմակերպել: Բայց որ յուրաքանչյուր դասի պետք է աշակերտին գնահատական նշանակի, այս մոտեցումը չի ընդունվում: Չի ընդունվում նաև, որ աշակերտն ամբողջ ամսվա ընթացքում ունենա մեկ գնահատական: Այսինքն՝ ուսուցիչն աշխատանքները համաչափորեն պետք է այնպես կազմակերպի, որ յուրաքանչյուր թեմայի կամ մյուս տեսակի հարցումների ձևով կարողանա լիարժեք գնահատել աշակերտի գիտելիքները:

Մի դիտարկում ևս. նկատվել է, որ դպրոցներում մաթեմատիկայից կամ լեզվից, հատկապես տարրական օղակում, դպրոցական բաղադրիչից հատկացված ժամերը դասամատյանում առանձին են գրանցվում, և դրանք հիմնականում նվիրվում են ստուգումներին: Դա ճիշտ չէ, որով-

հետև դպրոցական բաղադրիչով տրված ժամը համարվում է ուսումնական պլանով տվյալ առարկային հատկացվող ընդհանուր ժամաքանակի մաս: Հատկապես համալիր և համընդհանուր ստուգումների ժամանակ այսպիսի մի ցուցում է տրվում՝ թեմաներին վերաբերող առաջարկանքների ստուգումը կարող է իրականացվել գրավոր ձևով: Այսինքն՝ թեմայի վերաբերյալ ներկայացվում են առաջարկանքներ, որոնք հիմնականում թեստային տիպի են, ու կարիք չկա, որ աշակերտն անպայման գրավոր գրառումներ անի, ուղղակի ուսուցիչը կարող է բանավոր ստուգել՝ աշակերտն այդ առաջարկանքը ճիշտ է կատարել, թե՛ ոչ: Բանավոր հարցումների ժամանակ օգտագործվում են անծանոթ տեքստեր: Այս հարցը ևս երկար ժամանակ ըննարկվել է, և գտել ենք, որ ճիշտը դա է, որովհետև նախ անծանոթ տեքստի վրա պետք է փորձել ընթերցանության տեխնիկան՝ տեսնելու, թե անծանոթ տեքստը աշակերտին ինչպես է ընկալվում և վերարտադրում, անծանոթ տեքստի վրա նաև ստուգվում է քերականության նրա իմացությունը, թե անծանոթ բառերն ինչպես է կարողանում գործածել նախադասության մեջ և այլն: Այսինքն՝ տեքստին վերաբերող հարցադրումները հենց նպատակաուղղված են աշակերտների ունեցած գիտելիքների ընդհանրացման հիման վրա համապատասխան եզրահանգումներ կատարելուն: Ճիշտ է, սա մի քիչ աշխատատար գործընթաց է, քանի որ երբ ասում ենք՝ անծանոթ տեքստի վրա աշակերտը պետք է աշխատի, նշանակում է՝ ուսուցիչը նրան պետք է ապահովի տեքստով: Այստեղ ուսուցիչը պետք է հնարավորություն ունենա ձեռնարկներից տեքստերը, առաջարկանքները պատճենահանել, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ կամ խումբ ունենա իր ձեռքի տակ և նրա վրա աշ-

խատի: Դպրոցների մեծ մասն ունի պատճենահանող սարք, իսկ եթե չունեն (սակավաթիվ աշակերտներով դպրոցները), ուսուցիչը կարող է ինքը ձեռագիր կազմել և տրամադրել նրանց՝ ապահովելով այդ աշխատանքները: Բայց այս հարցերն իրենց հեշտ լուծումը կգտնեն, եթե մենք արդեն անցնենք Նոր ուսումնական ռազմավարությանը (ՆՈՒՌ)։ մեկ աշակերտին՝ մեկ համակարգիչ ծրագրին: Այստեղ արդեն ուսուցիչը խնդրի չի ունենա. ինքը տեքստերը համակարգչում կունենա և կհաղորդի, աշակերտները կհետևեն համակարգչին և կպատասխանեն: Այսինքն՝ այս ձևն արդեն ավելի դյուրին կդարձնի այս առարկայի պահանջները կատարելը:

- Գնահատման պահանջները բոլորին են վերաբերում:

- Բոլոր օղակներին՝ միջին և ավագ դպրոցին, բոլոր առարկաներին և բոլոր դասարաններին: Պարզապես մյուս առարկաների գծով համապատասխան մեթոդական ձեռնարկներ առայժմ չունենք, և այստեղ ուսուցիչն ինքը պետք է ստեղծի: Բոլոր դեպքերում եթե մեթոդական ձեռնարկն անգամ կա, ուսուցիչը պետք է աշխատի իր մեթոդներն ավելի կատարելագործել, ունենա իր յուրահատուկ մոտեցումն այս հարցում, միայն թե այս գնահատման չափանիշներն ուսուցիչներն ընկալեն ու իրականացնեն: Ասեմ, գործնական աշխատանքների համար յուրաքանչյուր առարկայի մասնագետ գիտի, թե որ թեմայից կարելի է գործնական աշխատանք կատարել: Սրա նպատակն էլ այն է, որ երեխան կարողանա իր ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

- Ձեր դիտարկմանը, գնահատման նոր համակարգի գաղափարաբանությունը բոլոր դասարաններին է իրականացվում:

- Մեզ թվում է՝ այն բոլոր դասարաններում և բոլոր ուսուցիչներին

կողմից չի օգտագործվում: Եթե ասում ենք, որ դպրոցում բարեփոխումներ ենք իրականացնում, նշանակում է՝ բարեփոխումները մեկ ընդհանուր շղթա են, որի մի օղակն է եթե չգործի, կիսաթափ մյուսների գործունեությունը: Մեր նպատակն է, որ գնահատման նոր գաղափարաբանությունը գործի ինչպես հարկն է: Արդեն բոլորը պետական չափորոշիչ ենք հաստատում: Առաջինի և երկրորդի փորձը ցույց է տվել, թե ինչ թերացումներ ունենք, հիմա այս նորն է, որը տպագրվել է և՛ «Լուսարարում», և՛ ՀՀ կրթության և գիտության «Տեղեկագրում»: Կա նաև յուրաքանչյուր առարկայի չափորոշիչ՝ իր ծրագրի հետ մեկտեղ և յուրաքանչյուր առարկայից դասագիրք: Այս երեքը՝ գումարած գնահատման նոր համակարգը, ուսուցիչը պետք է համարի, որպեսզի կարողանա պահանջները լիարժեք կատարել: Բոլոր ուսուցիչները՝ սկսնակ թե փորձառու, պետք է այս փաստաթղթերը լավ ուսումնասիրեն, այլապես սխալներ կունենան: 10-միավորային համակարգն ավելի լայն սպեկտր է, ինչը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ ավելի օբյեկտիվ գնահատել աշակերտին: Եթե նախկինում ասում էինք՝ «3» պլուս, «3» մինուս, և բոլորն «3» էին, հիմա «3» գնահատականի համար ունենք՝ 4, 5, 6 միավորները, «4»-ի համար՝ 7, 8, «5»-ի համար՝ 9, 10: Աշակերտն ինքն էլ իր գնահատականներով գիտի, թե իր արդյունքն ինչպիսիք է: Մտնում է ճիշտ իրականացնել: Յուրաքանչյուր նորամուծություն իր հետ բերում է նաև որոշակի բարդություններ, աշխատանք, և բոլոր ուսուցիչները չէ, որ կարող են միանգամից ընկալել ու կիրառել: Բայց այն, որ պետք է առաջնորդվել այս ցուցումներով ու այս չափանիշներով՝ բոլորի պարտականությունն է:

Ս. ԽԱԶՍՐՅԱՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Արդեն ավանդույթ են դարձել Շուշիի Արսեն խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի և Ասկերանի շրջանի Հարավ գյուղի դպրոցի փոխադարձ այցելությունները:

Քոլեջի դասախոսական կազմը մի խումբ ուսանողներին հետ հյուրընկալվեց Հարավ գյուղի դպրոցում: Նրանք դարաբարցում վայել ջերմ հյուրասիրությամբ ընդունեցին մեզ: Այնուհետև անցկացվեցին ռազմամարզական խաղեր և մրցումներ վոլեյբոլից, ֆուտբոլից, թենիսից և այլն: Հաղթող ժանաչված թիմերը պարգևատրվեցին: Դպրոցի պատմության ուսուցիչ Ալան Օհանջանյանը կազմակերպեց էքսկուրսիա դեպի Հարավի պատմական գեղատեսիլ վայրերը: Այցելեցինք 1796 թվականին կառուցված Սուրբ Մեսրոպ եկեղեցին, որի սրբախորհուրդ պատերի ներսում ըմբռնված են Տերուհանյան աղոթքի հոգեպարար մեղեդիները: Հանդիպումը սրտառու չէր: Փոխադարձ այցելությունը չուշացավ: Այս անգամ հյուրի կարգավիճակում հարավցիներն էին: Հանդիպման ժամանակ անցկացվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ մեր շնորհալի ուսանողների և դասախոսների մասնակցությամբ: Հաջորդ միջոցառումը մարզադահլիճում էր, որտեղ էլ անցկացվեցին ավանդույթ դարձած մարզական միջոցառումները:

Քոլեջի վաստակաշատ մանկավարժ Ալբերտ խաչատրյանը մեզ, որ 90-ամյա ճանապարհ անցած կրթօջախը նույնիսկ Արցախյան զոյամարտի տարիներին



կարողացել է զոյատել և աննկարագրելիորեն ծանր պայմաններում շարունակել պատվավոր, երախտաշատ գործունեությունը՝ պահպանելով իր հայեցի ազգային դիմագիծը: Բոլոր այդ տարիներին կրթօջախը պատվով տնօրինած մանկավարժը կարևորեց այն դերն ու պատասխանատվությունը, որն ունի քոլեջի դասախոսական կազմը դպրոցի պատրաստած ապագա ուսանողներից աշխատաշու-

կայի պահանջներին համապատասխան լավագույն մասնագետներ պատրաստելու գործում: Ուստի այդ կարևոր գործը պետք է երկուստեք կատարվի մեծ պատաս-



խանատվությամբ: Վերջում քոլեջի տնօրեն Ա. Հայրապետյանը բոլորին մաղթեց հաջողություններ իրենց աշխատանքային գործունեության մեջ՝ կարևորելով նման հանդիպումների անհրաժեշտությունը:

Ռուզաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի կազմակերպիչ

ՈՏԵՒ՝ ԴՍԱՐԱՆՆ Է ԳԱԼԻՍ... (Դաս-միջոցառում)

Հոչանց սարի լանջին բազմած փոքրիկ գյուղի՝ ազատամարտիկ Ավարո Վարդանյանի անունը կրող դպրոցն այս անգամ էլ մեզ անակնկալ մատուցեց: Շրջանի կրթության բաժնի մասնագետներ Հ. Սահակյանը, Ա. Սարգսյանը, Կ. Մովսեսյանը և տողերիս հեղինակը ուսուցչի թափուր տեղի համար մրցույթն անցկացնելու, տեղում մեթոդամանկավարժական օգնություն ցույց տալու նպատակով անցյալ տարվա նոյեմբերի 30-ին մեկնեցինք Հոչանց:

Դպրոցի մտքերից սկսած, մեզ անակնկալ էր սպասվում: Մեզ ջերմ դիմավորեցին և ուղեկցեցին «դատարանի դահլիճ», որտեղ դպրոցի 4-10-րդ դասարանների աշակերտները դաս-միջոցառում էին պատրաստել: Մեղադրյալը ածխածնի երկօքսիդն էր՝ ածխաթթու գազը: Դատարանի դահլիճում ուսուցիչներ էին, աշակերտներ, վկաներ, շրջանային «Մերան» թերթի լրագրողներ՝ չորրորդ դասարանի երկու աշակերտուհիներ, ծնողներ և մենք: Դատական միտերի քարտուղարը բացեց դատական միտը: Ելույթ ունեցավ պետական մեղադրյալը՝ դատախազ Քնարիկ Ներսիսյանը: Նա ներկայացրեց մեղադրական եզրակացությունը և դատարանից պահանջեց օրենքի ողջ խստությամբ պատժել մեղադրյալին՝ մթնոլորտն աղտոտելու, մոլորակի ջերմաստիճանի բարձրացման մեջ էական ներդրում ունենալու և բնապահպանական աղետներ իրականելու մեջ: Ստեցին վկաներին՝ շվեդացի քիմիկոս Ավենարիուսին՝ էրիկ Գրիգորյանին և «ռուս գիտնական» Մկրտիչ Գրիգորյանին: Գիտնական-վկաներն իրարաներ տեսակետներ ներկայացրին: Ստեցին նաև մեղադրյալին՝ Արփինե Գրիգորյանին, որն անկեղծորեն ընդունեց իր մեղքը՝ միաժամանակ մշտելով իր առավելությունները՝ իր դերը լուսավորչի

կենսաքիմիական գործընթացում, իր մի շարք միացությունների դերը սննդի արդյունաբերության մեջ (հացաբուլկեղեն, հանքային ջրեր) և կենցաղում (օճառ, լվացքի փոշի և այլն): Իսկ դատապաշտպան Մարգարիտա Գրիգորյանն իր պաշտպանական ճառում ոչ միայն արդարացրեց իր պաշտպանյալին՝ խնդրելով դատարանի դահլիճից ազատ արձակել նրան, այլև բացահայտեց մեղադրյալի հանցանքի բուն պատճառները՝ մարդկանց կողմից անտառների անխնամ հատումը, քիմիական գործարանների վառելիքի այրման հետևանքով մթնոլորտի աղտոտման պատճառները:

Մինչ դատարանը որոշում կկայացներ, դպրոցի փոքրիկ լրագրողները փորձեցին ներկաներից լսել իրենց կարծիքը դատավորի մասին՝ կղատե՞ն, արդյոք, ածխաթթու գազին, թե՛ կարդարացնեն և ազատ կարձակեն:

Հուրախություն բոլորի՝ դատավորի կայացրած վճիռը մեղադրյալին դատարանի դահլիճից ազատ արձակելու մասին, համընկավ դահլիճում ներկա գտնվողների կարծիքին:

Միջոցառումը դպրոցի տնօրեն Թուշիկ Մելքոնյանի և փորձառու ուսուցիչների օգնությամբ կազմակերպել էր այդ օրը մրցույթին մասնակցող քիմիայի ուսուցչուհի Գրետա Դատունյանը:

Ողջունելի է, որ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը համալրեց իր մանկավարժական գործունեությունը նմանատիպ միջոցառմամբ սկսող՝ Արցախի պետական լրագրողական ֆակուլտետի շրջանավարտ Գրետա Դատունյանը: Սիրվարդ ԹԱՄԱԶՅԱՆ Զառարանի շրջանի կրթության բաժին

ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻՆ ՄԻԱՅՆ ՈԳԵՂԵՆ ԿԱՆՉ ՉԷ...

Արձագանք «Բանակի հեղինակությունը անխոցելի պետք է լինի» («Լուսարար», հ. 32-33, 2011թ.) հոդվածին և Գ. ԼՂԳ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարությունների նախաձեռնությամբ «Ռազմահայրենասիրական դաստիարակություն» խորագրով կազմակերպված համաժողովին

Բավական չէ ազգի զավակը լինել, այլ պետք է նաև նրա հրաշունչ ու նվիրյալ զինվորը լինել:

Գ. Լժեղեհ

Հուրախություն բոլորիս՝ ռազմահայրենասիրական դաստիարակությունը գտնվում է մեր երկու հանրապետությունների պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների ուշադրության կենտրոնում, քանզի մեր զինված ուժերի զինանոցի հիմնական և անպարտելի զենքը հայրենասիրությունն է, իսկ հայրենասիրությամբ հարուստ ժողովուրդը դեպքերի խաղալիք չէ, այլ դրանց հրամայողը: Տա Աստված, որ այդ զենքը, որը ոչ հնանում է, ոչ խուճանում, հար ու հավետ մնա մեր բանակի զինանոցում:

Մեր փխրուն խաղաղությունը թշնամուն պարտադրված հրադադար է, և կայուն խաղաղության համար պետք է ուժեղ ու մարտունակ բանակ ունենալ, որը պատերազմը բացառելու ամենահուսալի երաշխիքն է:

Դպրոցական մտադասարանից է սկսում ձևավորվել մեր մտավոր ներուժը, մեր հայրենիքի պաշտպանությունը: Քանզի պաշտպանությունից մինչև քաղաքական, սոցիալական, տնտեսական ոլորտ ազգային մտքի հուժկու դրսևորումների կարիք ունեն և պահանջում են ազգի ընդհանուր ու

մասնագիտական կրթական բարձր մակարդակ: Քանզի դպրոցը զինված ուժերում բանակային ծառայությունը կազմակերպող համակարգի հիմնական օղակներից է: Եվ այդ ուղղությամբ տարվող նրա արդյունավետ աշխատանքներից է կախված մեր զինված ուժերի հետագա համալրումը, ասել է թե՛ հայրենիքի պաշտպանությունը: Սակայն պետք է խոստովանել, որ այդ աշխատանքները դեռ լիարժեք չեն, քանզի հայտնի է, որ նորակոչիկների մի ստվար մասը դժվար է հարմարվում բանակային կյանքին՝ համապատասխան գիտելիքներ ու կամային որակներ չունենալու, ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության գիտակցման, զինվորական երդման պահանջների անվերապահ կատարման պատրաստակամության բացակայության պատճառով:

Չպետք է մոռանալ՝ ով չի ցանկանում հարազատ բանակի զինվոր լինել, նա ստիպված կլինի օտար բանակի ստրուկը դառնալ:

Ինչպես տեսնում ենք, նախագորակոչային շրջանում դեռ շատ անելիքներ ունեն ընտանիքը, դպրոցը և հասարակությունը, և բանակի դրական ու բացասական կողմերի համար հավասարապես պատասխանատու են և ընտանիքը, և դպրոցը, և հասարակությունը:

Պատկերն ամբողջական լինելու համար ճիշտ կլինե՞ր անդրադառնալ նույն դաստիարակության արդյունք մեր օրիորդներին, որոնք նույնպես հարմարվելու խնդիրներ ունեն: Գաղտնիք չէ, որ ամուսնավուծությունների մի ստվար մասի պատճառն ամուսնու ընտանիքի պայմաններին չհարմարվելն է: Կարծում եմ՝ մեկնա-

բանություններն ավելորդ են:

Բանակը հասարակության հայելին է, նրա սիրտը, որտեղ արտացոլվում են հասարակության մեջ առկա դժվարությունները, խնդիրները, արատները: Հետևաբար՝ որքան առողջ ու կայուն հասարակություն ունենանք, այնքան առողջ ու ամուր բանակ կունենանք: Իսկ առողջ ու կայուն հասարակություն ունենալու համար անհրաժեշտ է առողջ ու կայուն ընտանիք:

Վերջին ժամանակներս մեր բանակի թեման դարձել է շահարկման առարկա որոշ հարթություններում: Դա պայքար է մեր երկրում ամենաբարձր հեղինակություն վայելող մի կառույցի՝ բանակի դեմ:

Ցավոք, մեզ պարտադրված պատերազմը շարունակվում է, շարունակվում է այլ ոլորտում, այլ հարթությունում:

Անտեսանելի այդ պատերազմն ավելի վտանգավոր է և շատ ծանր հետևանքներ կարող է ունենալ, քան մարտադաշտում: Մեր բանակի, զինված ուժերի, մեր երիտասարդության ու հասարակության խնդիրն է դիմակայել մտքերի, գաղափարների, տեղեկատվական, հոգեբանական այդ դժվարագույն մարտահրավերներին և ամեն կերպ ձգտել չպարտվել: Տեղին է հիշել, որ նման սառը պատերազմի հետևանքով փլուզվեց խորհրդային գերտերությունը: Այժմ ևս շարունակվում է այդ մողելի օգտագործումը այս կամ այն երկրում՝ աշխարհում եղանակն ստեղծող մեծ տերությունների կողմից:

Իսկ մեր համրապետությունում այն սկսվել է, երբ օտարերկրյա օտարազգիական հարցման արդյունքում պարզվել է, որ մեր հասարակությունը ուղղված միջոցառումներին:

ամենաբարձր վստահությունն է տաժում երկու կառույցի՝ զինված ուժերի և Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ, նկատելիորեն ուժեղացել մեր անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսից հետո: Զորահանդես, որը շատ ու շատ հարցերի պատասխան տվեց:

Նշված մարտահրավերներն ուղղված են վերոնշյալ երկու կառույցների հիմքերը խարխուլելու, բանակի ուշադրությունը շեղելու, թշնամու ջրադափն ջուր լցնելու:

Մեծ մտածողներից մեկն ասել է. «Թշնամին՝ ներսի թե դրսի, ունի մեկ անուն»: Բանակի հեղինակությանը ստվեր նետող ստվեր է նետում հայրենիքի, հարազատ ժողովրդի անվտանգության ապահովմանը:

Անկասկած, ծանր է հարազատի կորստի բեռը, կրկնակի ծանր՝ ծնողի և զավակի կորստի բեռը: Սակայն չպետք է մոռանալ, որ անհամեմատ ծանր է անհայրենիք լինելու բեռը:

Հայրենասեր ենք, բայց ափսոս, անձնապաշտ: Կեղծ հպարտության պատրանքն առած՝ խոնարհվում ենք մենք անգործի առաջ...

Մեր պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մի առիթով ասել է. «Մենք քանակին կարող ենք և ի վիճակի ենք պատասխանել միայն որակով»: Եթե մենք համախմբված, միավորված լինե՞նք այդ գաղափարի շուրջ, հօոս կցնդեն մեր հակառակորդի այն կամայական անհամարժեք պատերազմով այնքան չենք վնասի, որքան՝ խաղաղ դադարով: Հայերն օրհասական, ճակատագրական պահերին սերտ համախմբվել գիտեն, իսկ խաղաղ պայմաններում՝ արտահեղինակ ինչու բաժանվել: Ցավոք, մեր ժողովրդի այդ խոցելի կող-

մը, որը դարձրե շարունակ ուղեկցել է մեզ, չի վրիպել թշնամու աչքից՝ դառնալով աքիլեսյան գարշապար:

Այո, մեր թշնամին ամենատարբեր միջոցներով փորձում է ամենահզոր զենքը՝ պառակտումը, անգամ՝ մեր իսկ ծեռքով կիրառել մեր գործը ուժի՝ մեր միասնության դեմ:

Ոչ մի հիմնավորմամբ, ոչ մի պատճառաբանությամբ չի կարելի սասանել մեր բանակի հեղինակությունը: Հայրենիքի, հարազատ ժողովրդի անվտանգության ապահովման ամենահուսալի երաշխավորը հանդիսացող Հայոց բանակի հեղինակությունն անխոցելի պետք է լինի, որպեսզի անխոցելի լինեն մեր ազգային անկախությունը, մեր հայրենիքը, մեր խաղաղ կյանքը:

Մեր պատմության սկիզբն, այո, սկսվել է Հայկյան նետով,

ու երկարել, երկարել է սերունդների անվերջ երթով

Դեռքը հիմա մեզ է հասել, ոչ մի սերունդ չի ների մեզ,

Եթե նետը, Հայկյան նետը չփոխանցենք սերունդներին,

Եթե Շուշին, հայոց Շուշին իր վաղեմի փառքով

Չփոխանցենք սերունդներին:

Վստահ եմ, որ ընտանիք-դպրոց-հասարակություն-բանակ քառակողմ համակարգով մենք կկարողանանք Հայկյան նետին ու սարդարապատյան զենքին արժանի անձ ձևավորել:

Հայոց բանակի զորացումը համազգային խնդիր է: Նրան աջակցելը՝ բոլորիս պարտքը:

**Ն. ՆԱԿԱՆՅԱՆ**  
**Շուշիի Խ. Արվարձանի անվան հիմնական դպրոցի ցմբուհի ԼՂԳ վաստակավոր մանկավարժ**

ԲԱՑ ԴԱՍ ՆՁՊ-ԻՑ

Թաղավարդի Ա. Գրաշու անվան միջնակարգ դպրոցում նախկինում էլ էին կազմակերպվում բաց դասեր տարբեր առարկաներից: Այս անգամ այն ՆՁՊ-ից էր, որին մասնակցում էին ներկայացուցիչներ շրջանային ու հանրապետական համապատասխան մարմիններից, զինղեկներ հարևան գյուղերի դպրոցներից:



Դպրոցի զինղեկը՝ պահեստագործի ավագ լեյտենանտ Ջավեն Բաղասյանը, ով լի է երիտասարդական ավյունով ու նվիրվածությամբ, լրջորեն է մոտենում իր գործին: Նա քաջ գիտակցում է, որ ՆՁՊ առարկայի դասավանդումը, ինչն առավել քան երբևէ գտնվում է հանրապետության կրթության և գիտության նախարարությունների ուշադրության կենտրոնում, արդիական պահանջ է դառնում, քանզի որ մեր երկրի պաշտպանության երաշխավորը մեր բանակն է, իսկ բանակի համալրումն ինչքան կատարվի հայրենասեր, ռազմական գործին ծանոթ և մարտական պատրաստության այբուբենը սերտաժ զորակոչիկներով, այնքան բարձր կլինի նրա մարտական պատրաստության մակարդակը:

Չհինղել Ջ. Բաղասյանը լավ է գիտակցում իր կողմից դասավանդվող առարկայի կարևորությունը, որովհետև դեռևս 1992թ., դեռ 18-ը չլրացած, երբ զենքը ձեռքին համազուգուցի կամավորականների հետ պաշտպանում էր հայրենի գյուղի սահմանները,

զգաջ ռազմական գործին տեղյակ լինելու առավելությունն իր հրամանատար, Կալինինգրադի ռազմավիճակին ինստիտուտի շրջանավարտ Առուսան Բաղասյանի օրինակով և հասկացավ, որ բացի ուժեղ մարտական ոգուց, պակաս վում է, բայց հոգով մնալով զինվորական, քաղաքացիական մասնագիտություն է ընտրում «ՆՁՊ» և ֆիզիկական պատրաստությունը:

Մասնավորապես ասպարեզում զինվորական-ուսուցիչն իր աշխատասեր և պրպտուն բնավորության շնորհիվ աշխատանքային գործունեության երկրորդ տարում մասնակցելով ՆՁՊ ուսուցիչների ամենամյա վերապատրաստման քննություններին, հավաքում է ամենաբարձր միավորները և արժանանում խրախուսանքի: Իսկ հետագա տարիներին այդպիսի ստուգումների և քննությունների արդյունքում նա արժանանում է հերթական սպայական կոչման, արժեքավոր նվերի կամ պատվոգրի:

Չհինղել Բաղասյանի ավանդ մեծ է նաև տարբեր ռազմամարզական մրցումներում մեր դպրոցի թիմերի ունեցած հաջողություններում, նրա պարապած թիմերը մրցումների շրջանային փուլում բազմիցս գրավել են առաջին տեղ, իսկ մասնակցելով մրցումների հանրապետական փուլին արժանացել մրցանակային տարբեր տեղերի:

Չհինղել Բաղասյանը հպարտանում է իր այն սաներով, որոնք ավարտել են երևանի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը և այժմ ծառայում են ԼՂՀ ՊԲ շարքերում, որ տարբեր առիթներով միշտ ընդունում են իրենց զինղեկի հրավերը և ներկայանում հարազատ կրթօջախ՝ մասնակցելու ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներին:

ՄԵՆԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ ԱՉՈՒՄՈՒՄ

Երբևէ այդպես չէի հուզվել, ինչպես այդ օրը: Ազդիսի մշակույթի տան լեփ-լեցուն դահլիճում ներկա էին դպրոցականներ, ուսուցիչներ, ղեկավար աշխատողներ, ինչպես նաև զոհված ազատամարտիկների ծնողներ և հարազատներ, որոնք հրավիրվել էին մեկ անգամ ևս ունկնդրելու իրենց զավակների անցած մարտական ուղու, նրանց կատարած սխրագործությունների մասին՝ ծննդյան տարեդարձերի շրջանակներում: Դանդաղ երաժշտության և մթության մեջ մոմերի բոցվառացող լույսի ներքո ինչեցին առաջին հնգյակի անունները՝ Երանիկ, Արտիկ, Անդրանիկ, Հենրիկ, Յուրա... Համեստորեն ձևավորված անկյունում շարված են նրանց լուսանկարները: Նայելով նրանց՝ մի պահ թվում էր, թե կենդանի են և համարված մեր շարքերը՝ պիտի ունկնդրեն միջոցառումը, բայց ավաղ... Մշակերտները մանրամասն տեղեկություններ հաղորդեցին նրանց մարտական ուղու, կիսատ թողած գործերի, երազանքների, իղձերի մասին: Դահլիճում քար լռություն էր... Հանդիսականներն արցունքոտ հայացքներով ամենայն ուշադրությամբ լսում էին նրանցից յուրաքանչյուրի անցած կենսագրական ուղին: Դա արիության ու հայրենասիրության դաս էր, որի պահանջները թափանցելով յուրաքանչյուրիս սիրտը, անջնջելի տպավորություն թողեցին բոլորիս հիշողության մեջ: Համոզված եմ՝ մեր աշակերտները, լսելով իրենց համազուգուցիների կատարած քաջագործությունների մասին, դաստիարակչական մի դաս ևս քաղեցին և ավելի ու ավելի արիությամբ ու տոկունությամբ լքվեցին իրենց հարազատ երկրամասի հանդեպ: Նման միջոցառումներն ավելի խորն են թափանցում աշակերտների գաղափարաբարոյական մտածելակերպի մեջ, որովհետև դրանք և՛ տպավորիչ են, և՛ ուսանելի: Երեկոն երափակվեց Ազդիսի դպրոցի թատերական խմբի՝ Արամշատ Պապայանի «Սուտը թակարդում» ներկայացումով: Իսկ միջոցառման կազմակերպման համար հարկ է գուժեստի խոսքեր հղել Ազդիսի մշակույթի տան ղեկավար Իրա Պողոսյանին և դպրոցի արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն Նվարդ Պետրոսյանին: Միջոցառումը շարունակական է... Սպասում ենք հաջորդ հնգյակին:

**Յուրի ԲԵԳՆԱՐՅԱՆ**

**Սուսաննա ԳԱՍՊԱՐՅԱՆ**  
**Ազդիսի միջն. դպրոցի պարմուխյան ուսուցչուհի**

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ԹՎԵՐԻ ՆԿԻՐՅԱԼԸ, ՈՎ ՊՈՆԶԻԱ ԵՐ ՍԻՐՈՒՄ
Բենիկ Ավագումյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ



Խորհրդային դպրոցի ուսուցիչները, չնչին բացառությամբ, նվիրյալներ էին, իսկական մանկավարժներ, որոնք իրենց գործին տրված էին անմնացորդ, գլուխ չէին պահում, բիզնեսով չէին զբաղվում...

Սովորել է 1932թ. հունվարի 10-ին, Մարտունու շրջանի Սոս գյուղում: Արժանատի աստիճանով դպրոց է գնացել երկու տարի ուշացումով: Սովորել է կնոջ՝ Նինա Չակոբյանի հետ Մուսնի դասարանում, ով երկու տարով փոքր է իրենից: Դպրոցն ավարտելուց հետո երկուսն էլ մեկնել են Երևան՝ ուսուցիչ շարունակելու: Նինան ավարտել է գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիայի բաժինը, այնուհետև հեռակայել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի քիմիա-ֆիզիկա ֆակուլտետին: Սոսի միջնակարգ դպրոցի սիրված ուսուցիչներից էր:

Բենիկ Ավագումյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Հայրապետությանը էր հիշում, որ ուսանել է գիտնականներ Շահինյանին, Մերգելյանին, Սաղաթյանին: Պետական քննություն է հանձնել Վիկտոր Համբարձումյանին, պատիվ է ունեցել հանդիպել Նաիրի Ջարյանին, Շիրազին, Կապուտիկյանին, Իսահակյանին:

Ավագումյանները մեծ գերդաստան էին, նրանք գյուղի փոքրիկ շատեղ գրագետ մարդկանցից էին, գյուղի քահանայի քրոջ որդիները, որոնցից մեկն էլ Բենիկի հայրն էր՝ Անդրեյը, ով գոհվել է Մեծ Հայրենականում:

Ամուսնուն կորցրած մայրը մեծ զոհողությունների է դիմել շնորհալի և ուսումնասենչ որդուն կրթության տալու համար. նա մեկնեց Բաքու՝ աշխատելու, որպեսզի ապահովի որդու ասպրոստը Երևանում:

1956-ին Բենիկն ավարտում է համալսարանը, վերադառնում գյուղ ու հայրական տունը դաստիարակելու: Երիտասարդ մանկավարժը, ով մուրթ հոգու տեր էր, ծանր է տանում այն փաստը, որ պապի՝ վարպետ Կարապետի ձեռքբերված մեծ տրամադրվ կառուցած երկհարկանի քարե տունն այժմ կողպված էր: Բենիկը հեռավորություն ուներ Երևանում կամ Բաքվում մնալու, սակայն վերադարձավ հարազատ գյուղ, մայրն էլ Բաքվից վերադարձավ,

ու հանգած օջախը նորից ծխաց: Այդ տան հետ կապված՝ Բենիկը քնքուշ հիշողություններ ուներ ու հարատվությամբ էր պատմում, թե ինչպես է պապը կառուցել այդ տունը:

Կարապետը գյուղի շնորհալի վարպետներից էր: Նա է կառուցել Սոսի երկհարկանի սառնորակ աղբյուրը մեկ դար առաջ: Վարպետ Կարապետը (պատմությունը շարադրում են ըստ Բ. Ավագումյանի հիշողությունների տեսքի) սիրահարվել էր Դերունց Բլեն աղջկան՝ Ազիզգյուլին և ցանկանում էր մարդ ուղարկել նրանց տուն: Հարևան Սողոմոնը, լսելով այդ մասին, ասում է. «Կարապետ, ճպտոք քույրը կտրե, որ գործը գլուխ գա, նրանք ձեր տունը յոթ ծիավոր են ուղարկելու, եղ ձերը որտե՞ղ պիտի կապես»:

Կարապետը լսում է Սողոմոնին և ձեռնամուխ լինում նոր տան կառուցմանը: Կառուցում է երկհարկանի տուն, առաջին հարկը «թաղ» ուներ, առաջին թաղի մեջ նա յոթ ախոռ կառուցեց քարից, իսկ երկրորդ հարկը բնակելի էր: Առաջին հարկը կառուցելուց հետո մարդ ուղարկեց Դերունց տուն, պատասխանը «հա» էր: Այնուհետև պապը կառուցում է երկրորդ հարկը և ամուսնանում քահանայի քրոջ՝ Ազիզգյուլի հետ: Այս ամուսնությունից է ծնվում Անդրեյը՝ Բենիկի հայրը: Այս տանն է ծնվում նաև Բենիկը և ապրում այնտեղ մինչև 1969 թվականը, որից հետո հետևելով պապի օրինակին, իր սեփական տունն է կառուցում:

Այս պատմությունը խոսում է այն մասին, որ Ավագումյանները նպատակասլաց մարդիկ են, որ կարողանում են գնալ երազանքի ետևից ու հասնել նրան:

Բենիկ Ավագումյանի մանկավարժական կարիերան սկսվում է 1956թ., Ծովատեղ գյուղից: Այստեղ նա դասավանդում է ընդամենը մեկ տարի, հաջորդ տարվանից՝ հարազատ Սոսի միջնակարգ դպրոցում:

Շուրջ երեսուհինգ տարի նա աշխատել է Սոսի դպրոցում, դասավանդել մաթեմատիկա, մի առարկա, որը դժվարությամբ է յուրացվում աշակերտների կողմից: Սակայն այդ առարկան երբ \*\*դասավանդում էր Ավագումյանը, այնքան հեշտ էր ընկալվում: Նա դասը բացատրում էր շատ հասկանալի, մեծ պատասխանատվությամբ ու կենտրոնացած, աշակերտները պարզապես հնարավորություն չունեին շեղելու իրենց ուշադրությունը: «Վաստակավոր մանկավարժ» կոչմանն արժանացած Սոսի դպրոցի մեկ այլ նվիրյալ՝ Արտեմ Սուսայեյանը, ով երկար տարիներ Ավագումյանի գործընկերն է եղել, գտնում է, որ մաթեմատիկան Մարտունու շրջանում հենված է եղել չորս ամուր սյուների վրա: Այդ սյուներն էին Բալայան Էմիլը՝ Աշանից, Բաղչյան Վադիկանը՝ Հերիերից, Գաբրիելյան Կիման՝ Բերդաշենից և Ավագումյան Բենիկը՝ Սոսից:

Բենիկ Ավագումյանն ինքն էլ բախտ է ունեցել աշակերտը լինել Սոսի դպրոցի մեկ այլ հիանալի մաթեմատիկոսի՝ Արտաշես Գասպարյանին, ով «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ» կոչմանն է արժանացել:

Սա է երկի պատճառը, որ սուսեցի շրջանավարտներից շատերն ընտրել են մաթեմատիկա առարկան: Նրա աշակերտներից 118-ը հաջողությամբ քննություն

են հանձնել մաթեմատիկայից տարբեր բուհերում: Նրանցից շատերը բարձունքների են հասել: Ավագումյանին աշակերտել են Ստեփան Պետրոսյանը՝ Արցախի պետհամալսարանի պրոֆեսոր, Սլավիկ Մուքանյանը՝ Երևանում բանկի կառավարչի տեղակալ, Հրանտ Ալեքսանյանը՝ գրողների միության անդամ, Կարեն Գաբրիելյանը՝ Ռոստոմի մարզի դուստայի անդամ, Վազգեն Բալայանը՝ Մեծամորի ատոմակայանի գլխավոր ինժեներ, Իրինա Գրիգորյանը՝ Սոսի խելացի բժշկուհին, Արարատ Օհանջանյանը՝ հանրապետական հիվանդանոցի բժիշկ և շատ ու շատ ուրիշներ:

Ընկեր Ավագումյանը հպարտ էր իր սաներով, իսկ սաները երախտապարտ են նրան մաթեմատիկայի իրենց իմացությամբ:

Սոսի միջնակարգ դպրոցի ամենածաղկուն ժամանակաշրջանը համընկնում է Ավագումյանի աշխատած տարիներին: Դա 50-ականների վերջից մինչև Դարաբաղյան պատերազմի սկիզբն էր: Այդ տարիների ընթացքում նրա գործընկերներն են եղել ոչ պակաս հայտնի ու հմուտ մանկավարժներ Միքայել Բեգլարյանը, Ջաքարե Հովհաննիսյանը, Արտեմ Սուսայեյանը, Ֆրունզե Բալայանը, երկի Հայրապետյանը, Արամ Բալայանը, Ռաֆիկ և Լևոն Մուսայելյանները, Լաուրա Ջիվանշիրյանը, Էդիկ Սարգսյանը և շատ ուրիշներ. բոլորին հնարավոր չէ քվել:

1974-83 թվականներին Բ. Ավագումյանը ղեկավարել է դպրոցը: 1985 թվականից «Ուսուցիչ-մեթոդիստի» կոչում ուներ, դասավանդում էր կատարում շրջանի տարբեր դպրոցներում: Նրա ղեկավարած տարիներին ուսուցում ու կարգապահությունը դպրոցում բարձր մակարդակի վրա էին:

Հիշում են, թե մենք՝ աշակերտներ, ինչ պատկառանքով էինք վերաբերվում մեր տնօրենին: Երբ փողոցում հայտնվում էր ընկեր Ավագումյանը, մենք դադարեցնում էինք խաղը և թաքնվում պատերի ետևում: Մանկավարժի նրա կերպարը շատ ազդեցիկ էր: Նա ընդամենը լուռ անցնում էր մեր կողքով, և բոլորս սսկվում էինք:

Նա երբեք չէր գոռում, չէր հարվածում, սակայն բոլորը քաշվում էին նրանից: Խոսում էր ծանր-ծանր, մի տեսակ կշիռ տալով իր ասածներին, չէր կոպտում, չէր վիրավորում: Նրա մի փոքրիկ նկատողությունը բավական էր՝ աշակերտին կարգի բերելու համար: Իրեն թույլ չէր տալիս կոպիտ խոսել թերացող ուսուցիչների հետ, անձը վիրավորող նկատողություն անէ՝ գտնելով, որ դիմացինը բարձրագույն կրթությամբ մանկավարժ է, և ինքը պետք է հասկանա իր սխալը: Անփորձ ուսուցիչներին խորհուրդ էր տալիս դասին մերկայանալ պատրաստ ու ձեռք չբարձրացնել աշակերտի վրա, իսկ աշակերտներին ամենից առաջ խորհուրդ էր տալիս չխաբել ու շատ կարդալ գեղարվեստական գրքեր:

Ինքն էլ չնայած մաթեմատիկոս էր, շատ էր սիրում գրականությունը և իր ազատ ժամերին կարդում էր հայ դասականների, հատկապես պոեզիա էր սիրում: Նա համաձայն չէր այն տարածված մտքին, թե մաթեմատիկան չոր ու ցամաք առարկա է, թե թիվը գուրկ է ռոմանտիկայից: Այս տաղանդավոր մաթեմա-

տիկոսի հոգում մի ռոմանտիկ բանաստեղծ էր ննջում, որն ի ցույց եղավ թռչակի անցնելուց հետո, երբ մտորելու շատ ժամանակ ուներ: Նրա հուշագրությունների տեսքում են հանդիպեցի իր կողմից գրված մի քանի բանաստեղծությունների, որոնցից մեկը նվիրել է գրականության իր ուսուցչուհուն Երմոնյա Քոչարյանին: Հենց նա է Բենիկի հոգում սեր առաջացրել գրականության հանդեպ:

Բ. Ավագումյանը բանաստեղծություններ ունի՝ նվիրած ծաղիկներին, բնությանը, կյանքին ու մահին:

Մենք բոլորս վագրի մեջ ենք՝ դեպի կյանքին ընդառաջ, Ցավը այն է, որ վագուն ենք անարգ մահին ընդառաջ:

Ավագումյանն այնքան էր նվիրված մաթեմատիկային, թվերի աշխարհին, որ կյանքի վերջին տարիներին բանաստեղծություն ձուլեց թվին.

Մարդը բնության արարածն է, Թիվը մարդու հնարածն է, Մարդն իր մասին շատ է խոսում,

Թվի մասին բան չի ասում: Թե խոսում է, էս է ասում.

- Մատաղ լինեմ ես քո հոգում, Չոր թվերից մեզ ի՞նչ օգուտ, Ավին ով որ չոր է ասում, Առնվազն ստու է խոսում:

Մարդն իր կյանքում ինչ արարել, Թիվն է նրան առաջնորդել, Միայն ուղղել ու ճշմարիտ ուղի հարթել...

Բենիկ Ավագումյանը նաև հռետորի տաղանդ ուներ: Նա կարողանում էր գրավել մարդկանց ուշադրությունը: Ելույթ էր ունենում գյուղի բոլոր ուրախ և տխուր արարողություններին, խոսում կիրթ ու խելացի:

Մեր պատերազմում զոհված բոլոր սուսեցիները նրա աշակերտներն էին: Նա շատ ծանր էր տանում իր աշակերտների կորուստը, հոգու պարտքն էր համարում հրաժեշտի վերջին խոսքն ասել հուղարկավորման ժամանակ: Ու այդ խոստահայաց տղամանրը չէր զսպում արցունքները, երբ հրաժեշտ էր տալիս իր սաներին:

Ցավոք, մի քանի ամիս առաջ գյուղը հրաժեշտ տվեց իր ամենասիրելի ու հարգված մաթեմատիկոսին: Նա չհասցրեց տոնել իր ծննդյան 80-ամյակը: Նրա հարազատ կրթօջախը, նրա սաներն ու հարազատները չնայած հորելյանը կնշեն նրա երկրային բացակայությամբ, սակայն մեր մեծ ուսուցիչը միշտ իր մնայուն տեղը կունենա Սոսի միջնակարգ դպրոցում:

Այսօր Բենիկ Ավագումյանի մանկավարժական գործը շարունակում է որդին՝ Գագիկ Ավագումյանը, ով նույնպես դասավանդում է Սոսի դպրոցում, թողը՝ Անդրեյը, ով մաթեմատիկա դասավանդում է Բերթում, հարսը՝ Ա. Պետրոսյանը, ով նույնպես մաթեմատիկայի գիտակներից է: Թոռներից Արմենն ու Արսենը ևս ընտրել են մաթեմատիկա առարկան: Թվերի մեծ նվիրյալի երկարամյա վաստակը գնահատվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Իսկ համագյուղացիների մտապահման մեջ նա կնճա որպես Սոսի լավագույն մաթեմատիկոս:

Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շնորհավորանք

ԼԱՎԻ, ԲԱՐՈՒ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Ամեն անգամ, երբ թերթում ենք մեր հուշերի օրագիրը, հիշում ենք Արցախյան գոյամարտի թե՛ օրերին դպրոցական կյանքի օրերը... Ուսուցիչ, աշակերտ, ծնող, հասարակույթ...



Խանասու, խստապահանջ ու բարի... Կարող ենք շարունակել, սակայն ուզում ենք ասել, որ այս բանակապակցությունների կողքին հպարտ կանգնած է մանկավարժ, որի հայացքն ուղղված է Արցախի շենջող ու լուսապայծառ ապագային: Օֆելյա Արսենի Հայրապետյան մանկավարժն էր իր հոգու նրբին թելերով, իր մանկավարժական գործունեությամբ սերտորեն կապված է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի պատմության հետ:

1960-2004թթ. իր մանկավարժական անցկուն գործունեությամբ ոչ միայն կրթել ու դաստիարակել է հազարավոր աշակերտների, այլև մանկավարժական փորձ է ձևավորել բազմաթիվ ուսուցիչների մոտ: Նրա աշակերտներից շատերն են ընտրել մանկավարժի մասնագիտությունը և կողք կողքի աշխատել հարգարժան ու անչափ սիրելի ուսուցչուհու հետ:

Օ. Հայրապետյանը տարիների իր փորձառու աշխատանքի արդյունքում արժանացել է «Հանրապետության վաստակավոր ուսուցիչ» կոչման (2005թ.), պարգևատրվել «Լուսավորության գերազանցիկ» կրծքանշանով (1970թ.), «Աշխատանքի վետերան» մեդալով (1987թ.):

Ուսուցչուհին միշտ էլ վաստակել է իր գործընկերների և աշակերտների սերն ու հարգանքը:

Կենսաթոշակի անցնելուց հետո անգամ տեղափոխվել է աշխատել է ԼՂՀ կրթության նախարարությունում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ:

Մանկավարժական գործունեության ընթացքում երկար տարիներ եղել է Ստեփանակերտ քաղաքի առարկայական մեթոդավորման նախագահը և որպես ավագ դասախոս՝ աշխատել «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում (2002-2009թթ.):

Օ. Հայրապետյանի կրթած ու դաստիարակած բազմաթիվ տղաներ իրենց անունն են թողել Արցախյան գոյամարտի տարեգրության մեջ, արժանացել Արցախի հերոս և ՀՀ ազգային հերոս հայրենամուկեր պատվանվանը:

Այսօր լավի ու բարու սերմնացանի ութ տասնյակն է լրացել, բայց նա դարձյալ նույն մանկավարժն է ընտանիքում, հարազատների շրջանում և հասարակության մեջ:

Օֆելյա Հայրապետյանը սիրող մայր է և սիրասուն տարիկ:

Նա արժանի է ամեն լավի... Ցանկանում ենք նրան ամենալավն ու բարին:

Ստեփանակերտի հ. 3 հիմն. դպրոցի մանկավարժական կուլեկրիկ



ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԿՅԱՆՔԻ ԴԱՍ



Երբ գրիչ վերցրի՝ նկարագրելու այս կնոջ կյանքի, ավելի ճիշտ կլինի ասել՝ իր արարած կյանքի պատմությունը...

Մայրս, ինքնադաստիարակուհի պատասխանատվություն, դաս, որն ուսանելի կլիներ դպրոցի շեն նոր ուրբ...

հարգանքով և սիրով, գործելու իմաստը չիցնելու էր երևանյան դպրոցների ուսումնական ավելի բարվոք...

ՄԻՇՏ՝ ԴՐՊՏՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ



Լ ր ա - ցավ Ասկերանի շրջվարչապետ Կարեն Կարենյանը...

ընտրվել էր Կարենյանի կողմից Կարենյանի կողմից Կարենյանի կողմից...

ՀԵՏԱՔՐՔՐԱԶԱՐԺՈՒԹՅՈՒՆՆ

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Աճխարհագրության ուսուցումը պահանջում է մեծ դիտողականություն, ընդհանուր հասկացություններ...

կարևորագույն խնդիրներից է: Քարտեզից բացի կան տարբեր բնույթի և բեմայի սխեմաներ, մակետներ...

տեղ գտած թևավոր արտահայտությունները, ինչպիսիք են՝ «Նեղոսը Եգիպտոսի պարզևն է», «Մայր Արաքս», Սևանի մասին՝ «Երկնքի մի կտոր երկրի վրա»...


մի առարկայի համար էքսկուրսիաներն այնքան մեծ նշանակություն չունեն, որքան աշխարհագրության: Որպեսզի աշակերտներն աշխարհագրություն լավ իմանան...

Լուսինե ՄԵԼՈՒՄՅԱՆ Զաղաքային մեթոդավարման նախագահ



ԳՐԱԿԱՆ

DILEMMA (Դատմվածք)



Կոնիտաս ԴԱՍԻԵԼՅԱՆ

- Հիմա ի՞նչ պիտի անենք:  
 - Ի՞նչ ես հարցնում,- տղամարդը արմուկները հենեց սեղանին, գլուխն առավ ափերի մեջ:  
 Կինը փղծկաց: Տղամարդը մի կարծ, սաստող հայացք գցեց նրա դալուկ, ասես անարյուն դեմքին: Կինը խորը շունչ քաշեց ու դեմքը շրջելով՝ ափով սրբեց տամկացած աչքերը:  
 - Ասում եմ՝ գուցե սխալմո՞ւնք է,- քիչ անց, փորձելով իրեն ենթարկեցնել դողացող ձայնը, ասաց նա,- մի գուցե...  
 - Ի՞նչ սխալմունք, ահա,- տղամարդը ձեռքը մեկնելով՝ պատուհանի գոգից վերցրեց մի քանի ժամ առաջ ստացված հեռագիրն ու վերստին կարդաց ջթաքցրած դժկամությամբ: «Գիտեմ, դուք ինձ հաստատ մեռած եք հաշվում, բայց ուր որ է՝ կգամ, ու այնժամ կպարզվի, թե մեզմիջև ով է ողջ և ով՝ մեռած: Արմեն»:  
 - Մի տեսակ անհավատալի է,- ցրված ասաց կինը:  
 - Ի՞նչը:  
 - Ինչպե՞ս կարող է ողջ լինել, չէ՞ որ...  
 - Չէ՞ որ թաղված է հայրենի գյուղի գերեզմանոցում, հա՞,- թթված խոսեց տղամարդը,- ծանր քարն էլ վրան քաշած: Բայց դու հո՞ գիտես, ուրիշ շատերն էլ գիտեն, որ դազաղը դափ-դատարկ էր, և այդ ամենն արվել է իմ խեղճ հոր ու մոր համար, որպեսզի նրանք իրենց որդու կորուստը սգալու շիրիմ ունենան, ինչպես Թավադյանը՝ մեր դպրոցի տնօրենն էր ասում, որպեսզի անորոշության անողորմ ցեցը

ժամանակից շուտ նրանց էլ գերեզման չիջեցնի: Չնայած հազիվ մեկ-երկու տարի կարողացան դիմանալ: Ո՞վ գիտե, գուցե ծնողական սիրտն ուրիշ բան էր հուշում նրանց:  
 - Նրա հիշատակը որպես բացված վերք է մնում նաև իմ սրտում,- շփոթահար, կարծես թե քնի մեջ շշմեցած կինը՝ ծանր հոգոց համելով, թվում էր՝ օղբ չի բավականացնում:  
 - Դա իզուր ասացիր,- ատամները սեղմած մրթմրթաց տղամարդը,- դու դա չպիտի ասեիր, եթե նույնիսկ այդպես է:  
 Կինը կարկամեց: Ապա մի փոքր երկմտելով (երևի թե զղջաց ասածի համար), հուսահատ հարցրեց.  
 - Եթե ողջ-առողջ էր, ինչո՞ւ հիմա է մեզ հիշել:  
 Տղամարդը, որ սևեռում ինչ-որ կետի էր նայում, մտքերից սթափվելով՝ պատասխանեց.  
 - Ի՞նչ իմանաս... Կարող է՝ գերի էր ընկել, և հիմա բաց են թողել:  
 - Ախր, տասը տարի է անցել:  
 - Ինը տարի, տասը ամիս, քսանչորս օր,- ճշտեց տղամարդը:- Հետո ի՞նչ:  
 - Բայց հեռագիրն ինչո՞ւ պիտի Ռուսաստանից ուղարկեր:  
 - Հիմա ի՞նչ էր ուղարկելու:  
 - Ո՞վ կկարծեր, թե...,- կինը դառնորեն օրոքեց գլուխը:  
 - Չեղած, չլսված բան է, չէ՞, մեր ամենամոտ հարազատը, որ այդքան տարի անհայտ կորած էր համարվում, հանկարծ հայտնվել է, և մենք կարծես թե ուրախ չենք դրա համար,- տղամարդը տնքալով բարձրացավ տեղից, մի անգամ էլ շեշտակի նայեց սեղանի հակադիր ծայրին կծկված կնոջ սփրթնած դեմքին և պահարանից հանեց կոնյակի չբացված շիշը՝ գույզ բաժակների հետ:  
 - Այս պահին հենց դա է պակասում մեզ,- հեզմոտ, նվաղում ձայնով ծոր տվեց կինը:  
 - Վերցրու,- կտրուկ ասաց տղամարդն ու մի շնչով պարպեց բաժակը:  
 - Առանց խմելու էլ ես շքմած եմ,- կինը, այնուամենայնիվ, հասպաղումով խմեց՝ քառորդ բաժակ, դեմքը կմռռտելով: Հետո, շրթունքները կամացուկ շարժելով, ինչ-որ բան մրմնջաց ինքնիրեն: Դա չվրիպեց տղամարդու ուշադրությունից:  
 - Ձուր ջանք մի թափիր,- ասաց նա չարությամբ:- Տերն այստեղ անելիք չունի այլևս:  
 Կինը սակվեց՝ գանգամբի մեջ բռնվածի նման:  
 - Երբ նեղ տեղ ենք ընկնում, հիշում ենք Աստծուն,- կծու քծիծաղով շարունակեց տղամարդը՝ երկրորդ բաժակը գլխին քաշելով:- Ինքը էլ գիտես, որ մեր բռնած գործն էն գլխից

էր Աստծո դեմ, և նա վաղ թե ուշ պիտի պատժեր, բա ո՞նց:  
 Կինը տագնապած նայեց նրան ու ծպտուն չհանեց: Միայն գլուխն էր միալար տարուբերում:  
 - Այստեղ ոչ մի ծանոթություն, կաշառքն անգամ չի կարող օգնել: Մեղավորները պիտի իրենց արժանի պատիժն ստանան: Ոչ մի արդարացում: Ճիշտ է, Աստված ողորմած է, բայց ոչ միշտ՝ ոչ նման դեպքերում: Նա շողոքորթությունն ու քծնանքը չի ընդունում: Խելքը մեր այս հողեղեն ղեկավարությանը չգնա: Այնպես որ, կեղծավորություն մի արա, չի անցնի:  
 - Էլ մի խմիր,- թախանձեց կինը,- կամ գոնե մի բան կեր հետը:  
 - Մինչև այստեղ կուշտ եմ,- տղամարդը բութ մատը սեղմեց կոկորդին՝ դանակի շեղքի նման, և չարախնդաց:- Տերը վերևից ամեն ինչ տեսնում և հիշում է: Նրան չես կարող խաբել կամ մոլորեցնել, ինչպես..., ինչպես ինձ մոլորեցրիր:  
 Կինը ցնցվեց. դրան չէր սպասում: Սակայն լռում էր, ըստ երևույթին, ձգտելով մեղմել կամ գոնե չարել իրավիճակը:  
 - Ինչո՞ւ ես լռում,- հերթական բաժակը կուլ տալով, բղավեց տղամարդը: Նրա աչքերը վառվում էին: Ինչո՞ւ ինձ մեղքի տակ գցեցիր:  
 - Ես՝ թե՛գ, թե՛ դու՝ ինձ,- կնոջ դեմքը ամոթից, հուզմունքից, թե՛ վիրավորանքից կասկարմրել էր:  
 - Դու չէիր ուզում, ու ես գոռով եկա, հա՞...  
 - Ես դա թույլ եմ տվել Արամիկիս համար,- կինը ողբալի վնգստաց,- որ անհայր չմնա:  
 - Դա, գոռով եմ մտել անկողնից,- լեզուն փաթ գցելով, գազազած գոչեց տղամարդը,- հարազատ եղբորս անկողնից, երբ տարին դեռ չէր լրացել... Լիրբ:  
 - Չգայիր,- բռնկվեց կինը զայրույթից դողալով,- շատ պետք էիր: Թող գա, նա ինձ անպայման կնեղու, դու քո գլխի ճարը տես:  
 Տղամարդը վեր կացավ, մոտեցավ և այնպես կրպտորեն սեղմեց նրա ուսը, որ կինը խելահեղ ծկթաց: Ասես հոգեվաղք էր ապրում:  
 - Հույս չպահես,- ջղազգիռ, թունոտ նետեց տղամարդը: Նրա ողջ կեցվածքն ամուլոր սպառնալիք էր արտահայտում:- Ես կամ քեզ եմ սպանելու, կամ՝ երկուսիս միասին: Ընտրությունը քեզ եմ թողնում: Ժամանակ դեռ ունենեմ,- ձեռքը թափ տվեց և դանդաղ, առանց ետ նայելու դուրս եկավ սենյակից:  
 Կինը սուկումով նայեց նրա ետևից ու սարսռաց:  
 Գիշերը լի էր գարիուրելի մղձավանջներով: Կինը կիսաթուն երազ տեսավ, իբր Արմենը ելել և իր անունը տալով՝ ծեծում է դուռը: Անմի-

ջապես վեր թռավ, մարմնով մեկ լսելիքի փոխարկվեց: Ոչ մի ծայր ու ծպտուն, կողքի սենյակից հնչող ականջ ծակող խոսակցություն: Մի կերպ աչք կայցրեց: Այս անգամ իբր ինքը պառկած է դազաղի մեջ, և իր վրա մեխում են կափարիչը՝ թղխկ, թղխկ, թղխկ... Սարսափահար բացեց աչքերը, մարմինը՝ քափուքրտիմբի մեջ: Լուսացել էր: Նույն ծայրն էր դարձյալ ունկերում: Նա ակնհայտ շփոթության մեջ էր և ուշացումով ըմբռնեց, որ դուռն են ծեծում: Մինչև ինքը լուսնոտի քայլերով կմոտենար, տղամարդն արդեն բացել էր այն:  
 Շեմին կանգնած էր երեկվա տարեց փոստատարը:  
 - Ներող եղեք,- ասաց նա՝ կարճատես աչքերը ճապացնելով մեկ տղամարդուն, մեկ կնոջը հառելով,- թյուրիմացություն է տեղի ունեցել: Երեկ ես ձեզ սխալմամբ ուրիշի հեռագիր էի հանձնել: Խնդրում եմ վերադարձնել:  
 - Բայց...,- գրեթե միաբերան ձայնակցեցին ամուսինները՝ ականափիչ հայացքներ փոխանակելով:  
 - Բնակարանի համարն է շփոթեցրել հիմար ծերուկիս: Նրանցն էլ է 13, ձերն էլ:- Փոստատարը տանտիրուհու ձեռքից վերցնելով հեռագիրը՝ պարզեց նրանց,- տեսնո՞ւմ եք, շենք 5 գ, իսկ ձերը 5 ք-ն է, չէ՞:  
 - Ըիր...,- տղամարդը քիչ մնաց լեզուն կուլ տար, կինը, իր հերթին, ապշած՝ ձեռքով փակեց բերանը: Այ՛ք քեզ բան, հեռագրի տեքստից խուճապահար՝ նրանք մինչև իսկ աչքի չէին անցկացրել ո՞չ հասցեատիրոջ ազգանունը, ո՞չ հասցեն...  
 - Պարզվում է, որ Ռուսաստանում նրանք էլ Արմեն ունեն, դո՞ւք էլ,- փոստատարը կրկին մեկ առ մեկ անթթի տնտղեց նրանց: Երկուսով գլխով արին մեքենաբար:- Ուրեմն, ես սխալվելու իրավունք ունեմ,- անվստահ ժպտաց փոստատարը և ձայնը իջեցնելով, մի տեսակ սրտնեղած ավելացրեց:- Ձեր Արմենը՝ չգիտեմ, բայց նրանց բանի պետք չէ, ասում են՝ նստած է բանտում... Այստեղ էլ մայրը, կինը, եղբայրն իրար հետ լեզու չեն գտնում: Խրթին պատմություն է: Կներեք, շատ խոսեցի,- ու գնաց:  
 - Ես էլ գնամ,- տղամարդը շտապ հագավ վերարկուն:  
 Կինը գունատվեց: Ու երբ տղամարդը կոչիկների քուլերը կապելիս քթի տակ թոնթոնաց՝ «գործից ուշացա» ասելով, կինը, որ շարունակում էր գլխահակ կանգնած մնալ, սովորության ուժով, հիմա, սակայն, շիկնելով-նեղվելով հարցրեց.  
 - Շո՞ւտ կվերադառնաս:  
 Տղամարդը անորոշ թոթվեց ուսերը՝ դուռը հետևից ծածկելով:

«Քո նամականին» շարքից

- Լավ ու վատի դիմախաղ ու մոլորված, Թե կոպերդ կծանրանան Ինձ տեսնելու մեծ հավատով, Այդ հուսախաբ գիշերներից Երազներդ գուցե տխրեն, Կգարմանաս, որ թողել եմ Իուսյը մեռնի, Քո խաչը քեզ կորացնի, Քեզ՝ անհաշտիդ, ցավի հետ հաշտեցնի, Որ հետո էլ, Երբ մարմինը հոգու ցավից կփլվի, Երազիդ մեջ ես հայտնվեմ, Կորստի մոր գույժը բերեմ.  
 - Ինչո՞ւ, մայրս,- կհարցնես, Կիսամարմին իմ հոգին Երջանիկ չէր ավելի... Եվ բերկրանքը ձայնարձակման նույնքան հնչում ու սիրելի:  
 - Ասա, մայրս, Ի՞նչ հանգերով թերթն մոր էջը ցավի, ուր աշխարհն այս այլ գույներով է բացվում, Եվ ցերեկը գիշերային հագ ու կապով, Հագար ու մի անդունդներ ու վիհեր չափում, Շարժումների ու տարածվող ձայների Հզոր տաճարը կերտում: Այդ ձայների տատանումից ալիքավոր հորձանքները անիմաստ Ինչպես ներել, ինչպես ապրել...  
 - Աղջիկս,

Խ Ր Ա Տ

Դու չես կարող վկա լինել Ձգացմունքի խորության մեջ մեռնող բառի հոգեվաղքին, Ուր անանուն պատկերներից Լուռ սովորվող ոգիների հանդեսում Կախարդանքը մոր սահմաններ է բացում, Տիտանական այս արարմանն Ի պատասխան՝ Քեզ մասնակից դարձնում: Դու չես կարող ականջ փակել Շարժումներից լուռ արձակվող խորհրդավոր ձայներից, Դիմակայել արյան կանչի ցնցումներից: Ոչ, չես կարող:  
 - Ու քանի դեռ ավստոսում ես բուրմունքն առնել բացվող վարդի ու ելակի համը տեսնել, Դու չես կարող հուշ դարձնել ժամանակը, Բռնի մետել գիրկն անցյալի բոլոր խոհերը կենդանի ու չափստալ, Դու չես կարող:  
 - Ու քանի դեռ ծիծաղի մեջ Անփայլ են աչքերը քո Ու ձայնդ՝ անլսելի, Դու չես կարող քայլել դեպի ամբոխներն ու հետ չմայել, Վարկյանի պտույտի մեջ Կանգնել այնտեղ, ուր Երկինքը միանում է երկրին Եվ հանդիպումը այդ

Փարատուն բոլոր կարոտները:  
 - Ու քանի դեռ Քո սիրասուն հոգիների օրհնությունը դեռ չի փրկել աղոթքներից հուսախաբ քո հոգին, Դու չես կարող հաշտվել քեզ հետ, Ապրել քեզ հետ ու չափստալ Տապալումը մեծ հմայքի:  
 - Բայց մի օր էլ, Դողանքի տակ ավետումի, Ավերումիդ փլատակներից Թևեր հառնի կտոր մը հույս, Մի հապաղիր, Պարզիր ձեռքը, Նետվիր առաջ՝ մոր գրկի մեջ, Խոնարհումով՝ հոր առաջ:  
 - Ու փրկիր ձեռագիրդ, Մաքուր, անկեղծ ու անբեռ Ու փրկիր երգերդ Որ փայտել են հորինումից Ու կուչ եկել ականալույսի Ստվերի տակ:  
 - Ու ավետիր դողանջներով այս երգի Փրկությունը բարի:  
 Ով էլ լինի, Արդար է, թող վայելի:  
 23 հունվար 2011

ԶԱՆԱԶՆ

ԱՐԺԵ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՐԴԱԼ

Այսօր ուզում են խոսք ասել հրաշալի մի գրքի մասին, որի հեղինակները ամուսիններ Երվանդ և Նինա Աբրահամյաններն են, ովքեր երկար տարիներ աշխատել են դպրոցում, այժմ բոշակառու են (մասնագիտությամբ առաջինը ագրոնոմ է, երկրորդը՝ կենսաբան):

«Ասում են՝ մարդը մերկ գալիս ու մերկ գնում է այս աշխարհից,



ԱՐՅԱՆՅԱՆ ԴԵՐԱՔՈՒՅՆԵՐ

բայց ես համոզված եմ, որ մարդը մերկ չի գնում: Նա իր հետ տանում է մի անփոխարինելի գանձ, որն իր մեջ ամփոփում է աշխատանքում ու պրակտիկայում ձեռք բերած և ժողովրդի կողմից հավանություն գտած փորձերի արդյունքները: Հետևապես, անտեսել այդ ամենը, նշանակում է կորցնել ձեռք բերածը և նորից քայլել փորձությունների ճանապարհով: Ես իմ հոգու պարտքն եմ համարում այս աշխարհից ոչինչ չտանել ինձ հետ և իմ ինքնագոյն առանց մնացորդի պատմողական ձևով պարզ ու հասարակ լեզվով և օրինակներով մերկայացնել իմ ժողովրդին»,- գրում է Ե. Աբրահամյանը:

Բացեք, խնդրեմ, բոլորովին վերջերս Ստեփանակերտի «Սոնա» հրատարակչությունում տպագրված «Արցախյան դեղամիջոցները (221 էջ, 500 օրինակ) գիրքը և կիսամոլեթը, որ այն շատ հետաքրքիր ու օգտակար է: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ այս օրերին հայրենի Սեփ թաղերում, շրջանում ու նրա սահմաններից դուրս այն ձեռքից ձեռք է անցնում, տնից տուն: Առաջին էջում «Երկու խոսքում» կարդում ենք.

«Բնությունը շռայլորեն պարզել է մեզ շատ ու շատ բարիքներ, որոնցից օգտվել են մեր նախնիները, դարձել անբախտի ու երկարակյաց: Եկեք սովորենք ու ճանաչենք մեր բնաշխարհը, հոգատար վերաբերմունք ցուցաբերենք նրա նկատմամբ և հաճությամբ վայելենք նրա պարզաձև բարիքները»:

«Հավատը հույս է, հավատը լույս է, որի շողերին կառչելով՝ հիվանդը ելնում է հուսահատության մղձավանջից... Հետևապես, ժողովրդական բժշկը պետք է ունենա այնպիսի ունակություն, որ կարողանա հիվանդի հոգում արթնացնել հավատ, ակտիվացնել օրգանիզմի կենսական պրոցեսները և ապա նոր անցնել բուժման աշխատանքներին»:

Թե ինչպիսի հաճությամբ, ոգևորությամբ են կարդացվում ընկուզենուն, թթնուն, խնձորենուն, մասթնուն, գազարին, ռեհանին, սերկևիլին, բողկին, ուրցին և այլ բույսերին նվիրված էջերը՝ դժվարանում են ասել: Այնքան պատկե-

րավոր, այնքան գեղեցիկ են տրված այս բույսերի ու պտուղների համր, հոտը, գույնը, ձևը, որ թվում է, տեսնում, զգում ես բոլորը, հմայքը: Պարզվում է, որ նշած բույսերն ու պտուղները (ու՝ ոչ միայն դրանք) շատ ավելի բուժիչ են, օգտակար ու առողջարար, քան մենք գիտենք:

«Ընկուզենու միջուկը,- կարդում ենք գրքում,- հարուստ է ճարպերով (մինչև 78%), սպիտակուցներով (մինչև 21%), վիտամիններով (A, B, C), երկաթի, կրբալտի աղերով: Ընկուզն իր կալորիականությամբ 8 անգամ գերազանցում է ցորենի հացին, 11 անգամ՝ կովի կաթին, 7 անգամ՝ կարտոֆիլին, 15 անգամ՝ տանձին և այլն»:

Դե իսկ թթնին, դարաբաղու թթնին պարզապես հրաշք է համարվում: Այդպես էլ գրված է:

«Արցախը դժվար է պատկերացնել առանց թթնու: Դարերի պատմություն ունի արցախցու և թթնու բարեկամությունը: Արցախում թթնին միակ տարածված կուլտուրան է, որն իր արժանիքներով հանդերձ՝ գեր է մնացել թունաքամիկատնային և էկոլոգիապես միանգամայն մաքուր պահել շրջապատը...»:

Ապա համոզիչ խոսք են ասում թթնու պտուղների, տերևների նշանակության, օգտակարության մասին:

Ամուսինների գրչի տակ ասես շունչ, կենդանություն են առել մարտնչի ու փիփերը, լիմոնն ու մեղրաթեյը, սզինն ու ալոնճին ծառը, մեր բնաշխարհի գեղեցկությունները, մեզ շրջապատող բնության անփոխարինելի գարդերը, ծառերը, ծաղիկները, բոլոր կուլտուրաները:

Կարդում ես կուժկտորուկի, դրոնի, դանդուռի մասին ու զարմանում՝ այսքան մանրամասն որտեղի՞ց գիտեն...

Գոհունակությամբ ընդգծենք, որ գրքին մի առանձին շուք, գեղեցկություն են տալիս գունավոր նկարները, որոնք այնքան վառ են, կենդանի, շոշափելի ու տեսանելի, որ թվում է, կարող ես ձեռք տալ, հոտ քաշել, համտեսել, ցորունից կամ ճյուղից բռնել:

Ամփոփենք. «Արցախյան դեղամիջոցները», անշուշտ, արժեքավոր գործ է, որ ծնունդ է առել երկար տարիների քրտնաքոր աշխատանքի, սկիզբ ու վերջ չունեցող որոնումների, պրակտիկների, փորձերի ու փորձարկումների շնորհիվ: Այն կարող է սեղանի գիրք լինել և նրբաճաշակ մտավորականի, և՛ հասարակ շինականի, և՛ դասարան մտնողի, և՛ խոհանոցում ճաշ պատրաստողի համար: Բոլոր տարիքի ընթերցողների համար:

Ասել է թե՛ արժե անպայման կարդալ, քանզի այն կարող է յուրահատուկ դեղամիջոց լինել մեր մտավոր ու հոգևոր «տկարությունը» բուժելու, հարազատ բնաշխարհն ավելի մոտիկից ճանաչելու, նրա հազար ու մի հրաշալիքներով հրապուրվելու, տակավին անհայտ գաղտնիքները պարզելու, նոր բան սովորելու, մեր ինքնագոյն ակտիվ խորացնելու, հիմնավոր դարձնելու համար:

**Մի քայլ ԲԱՆԱՆ Թոշակառու ուսուցիչ Գ. Մեծ Թաղեր**

Հետամանորյա արձագանքներ

ԱՆՍՊԱՌ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈԼՈՐԻՆ

Նոր տարին յուրահատուկ տոն է բոլորի համար: Ամանորին սպասում են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը:

Դեկտեմբերի 28-ին Շոշի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի տոնական դահլիճը լեփ-լեցուն էր: Երեխաներից շատերը դարձել էին հեքիաթի հերոսներ:

Եվսով քաղաքի պահլը: Սկսվեց ամանորյա հանդեսը, որի կազմակերպիչներն էին դպրոցի ուսումնադատիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Անժելա Պետրոսյանը, հայրը լեզվի և գրականության ուսուցչուհի Մանյա Յարամիշյանը:



Վերջիններիս հրավերով երեխաներին ուրախ պահեր պարզակելու էր եկել Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան պետական դրամատիկական

թատրոնի վաստակաշատ դերասանուհի Սվետլանա Թովմայանը, ով հանդես եկավ Ղարաբաղի այսպիսի կերպարով: Ուրախ ու անմոռաց պահեր պարզակեցին Ձմեռ պապն ու Չյունամուշը:

Միջոցառմանն ակտիվորեն մասնակցեցին Ասկերանի ՄՊՍԿ-ի և Շոշի մասնաճյուղի ասմունքի խմբակի երեխաները, որոնք հիացրին իրենց տոնական ելույթներով:

Նոր տարին թող ամենքին պարզակ անսպառ երջանկություն, և Արցախ աշխարհում ընդմիջտ թևածեն խաղաղության աղավաղները:

ՉԵՆ ՄՆԱՍ, ԴԱՅՈՒՉԵՆ

Ասկերանի շրջանի Դաշուշենի հիմնական դպրոցի ռուսաց լեզվի սկսնակ ուսուցչուհի Աննա Բալայանը, մանկավարժական պրակտիկայում գուրադեռ, դրսևորեց կազմակերպչական իր կարողությունը: Նա դպրոցի վանդակալ տոնակատարություններից մեկի՝ Ամանորի միջոցառման մտահղացումն ու նախապատրաստումը ստանձնեց՝ բերելով իր նորամուծությունը: Միջոցառման գեղարվեստական, աշխույժ ու հետաքրքիր բովանդակությունը ներդաշնակվում էր աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ. նրանք պետք է ընկերանան, առնչություն ունենան նաև սեղանի շուրջ: Տոնական սեղանը ոչ թե պետք է դրվի միջոցառումից հետո, առանց աշակերտների, այլ միջոցառման ընթացքում՝ կարծում է նա և այդպես էլ արեց: Դպրոցն էլ մի ընտանիք է, որտեղ աշակերտը սեղանից ճիշտ օգտվելը կտոմորի իր ուսուցիչից, իսկ վերջինս նկատվող բացերը վերացնելու հնարավորություն կստանա:

Ա. Բալայանը կարողացավ ամանորյա ծրագրի իրականացման մեջ ընդգրկել դպրոցի ողջ կազմը:

Կուլեկտիվ աշխատանքի արդյունքը ճառագում էր սեր, ուրախություն, անբռնազորս մթնոլորտ: Միջոցառման շնորհիվ այնքան բնական էր միջավայրը, որ դպրոցի հովանավոր, սակրավորների գորահրամանատար Ռ. Գալստյանը մրցույթներում հաղթող աշակերտին՝ Դավիթին և դպրոցի ուսուցչուհիներից մշտական հաղորդավար Մ. Համբարձումյանին անակնկալ նվեր տալով չքավարություն, առաջարկեց ապահովել դպրոցի այցելությունը դեպի Գամձասար:

Դասուղեկ Ա. Հովսեփյանն էլ իր խոստման համաձայն նվերներ տվեց կարգապահ ու ջանասեր աշակերտներին:

Դպրոցի «Տարվա լավագույն աշակերտ» պատվոգրով պարգևատրվեցին պարտաճանաչ Սամվելը, ջանասեր Մերին, աշխատասեր Մարտիրոսը և ուշուի մրցույթներում հաղթած Դավիթը: Իսկ Ձմեռ պապը՝ թատերականի ուսանող, զինվոր Սիտը, անհուն խանդավառություն բերեց դպրոց՝ իր

նվերների հետ մեկտեղ, որից անմասն չմնացին համայնքի ոչ դպրոցահասակ երեխաները: Նա ռեժիսորական իր ողջ հմտությամբ կարողացավ երեխաներին քաջալերել այնպես, որ վերջիններս ուղքն իրենց տան շնորհ մերս դնելիս պայծառ տրամադրությամբ ու խոր հավատով վստահեցնեն յուրախին-



ներին, որ իրենց դպրոցն աշխարհի ամենալավ կրթօջախն է, իսկ իրենց գյուղն անփոխարինելի է: Եվ տարիները որքան էլ հերթափոխեն միմյանց, իրենք չեն լքի հայրենի գյուղը՝ որքան էլ այլ վայրերում փայլեն ու իրապարտանքը մեծ լինի: Ավելին, ամեն Ամանորի նոր խնդրությամբ կլցվեն ու կբարձրաձայնեն. «Շեն մնաս, Դաշուշեն, աշխարհի ամենագողտրիկ ու չքմաղ իմ բնակավայր: Շնորհավոր քո Նոր տարին, հողիդ կառչած ու բազում զավակներ են կամենում քեզ: Քո օջախների ծովը թող միշտ բարձրանա, սեղաններդ առատ լինեն, իսկ մեր հոգու ուրախությունից ճառագեն մեր խնդուն աչքերը»... **Անահիտ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ

Ցավալի է, որ փոքրիկ Արցախում կանակատուն: Մանուկներ, որոնք ծակատագրերը ծնողները թողել են բախտի քմահաճույքին՝ գուրկ ծնողական քնքշանքից ու ընտանեկան ջերմությունից:

Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հիմնական դպրոցի 6-րդ «ա» դասարանի աշակերտները դասուղեկ Արևիկ Հովսեփյանի ղեկավարությամբ տարեմուտին այցելեցին Ստեփանակերտի հ. 1 գիշերօթիկ հաստատություն՝ ամանորյա անակնկալ մատուցելու մանկատան երեխաներին: Աշակերտները մեծ ոգևորությամբ պատրաստել էին ծանրոցներ: Ձմեռ պապի ու Չյունամուշի ուղեկցությամբ փուչիկներով, երգ ու պարով նրանք մտան գիշերօթիկ հաստատություն: Անակնկալներ էր մանկատան սաների ուրախությունն ու զարմանքը:

Աշակերտներին ուղեկցեցին գեղեցիկ կահավորված սրահ, որտեղ և տոնական հանդես կազմակերպեցին: Ձմեռ պապը հանելուկներ էր ասում, իսկ մանկատան սաները գուշակում ու նվերներ էին ստանում:

Սեկ ժամ տևած այս երջանկությունը մանկատան սաներին մի պահ մոռանալ տվեց կարտոն ու ցավը, որ նրանք զգում էին: Փոքրիկները երգեցին, տոնածառի շուրջը պար բռնեցին:

Նրանցից յուրաքանչյուրի հոգին ասես մի կտոր արև էր գրկել ու մայրաբար օրոր էր ասում: Մանկատան սաներից են նաև 2-րդ դպրոցի մախկին աշակերտներ Նունե և Նարինե Դանիելյանները, ովքեր չկարողացան զսպել արցունքները:



Փոքրիկ Նարինեն գրկել էր ուսուցիչներին ու աղեկտոր լաց էր լինում՝ ասելով, որ իր դպրոցին ու հատկապես առաջին ուսուցչուհուն՝ ընկեր Առստանյանին է կարոտում: Նա հարցուփորձ էր անում ուսուցչուհու մասին, որին մոր պես սիրում էր: Պահը հուզիչ էր: Անհնար էր զսպել արցունքները՝ տեսնելով փոքրիկ կարտոն: Թեկուզ փոքրիկներն ուրախացնում ու պարում էին, միևնույն է, նրանց

աչքերից ծորում էր ընտանիքի ջերմության պակասը:

Մանկատան այցելելուց մի քանի օր անց 6-րդ «ա» դասարանում դասուղեկի բաց ժամ էր «Ընտանիքը և նրա խնդիրները» թեմայով: Ներկա էին դպրոցի տնօրինությունը, դասուղեկ-դասավարները և ծնողները:

Աշակերտները կիսեցին իրենց տպավորություններն ու կարծիքները: Մանկատանը նկարահանած հուզիչ տեսաֆիլմը դիտելուց հետո ուսուցիչներն ու աշակերտները չկարողացան զսպել իրենց արցունքները: Դասուղեկ Հովսեփյանը մասնագիտական հմտությամբ մեկնաբանեց «Ընտանիք» հասկացության իմաստը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ երեխայի դաստիարակության գործում շատ կարևոր է ծնողի դերը:

Չկա աշխարհում մի սեր, որ համեմատվի մայրական սիրո հետ: Թեկուզ հենց տեսաֆիլմից երևում էր, որ երեխաներն ապրում են տաք ու կահավորված սենյակներում, և նրանց ուսուցիչներն ու դասակները հոգատար են, միևնույն է, նրանք լիարժեք երջանիկ չեն:

**Գոհար ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱրՊՅ լրագրության 3-րդ կուրսի ուսանողուհի**

ԼՈՒՍԱՐԱՐ համագիր՝ ՍԿԵՏԼՆԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ֆակս՝ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3115: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 14.01.2012թ.: